խօս Հայերի մէջ պահպանուել են մինչև ցարդ հետևեալ հնաւանդ սքանչելի սովորութիւնները։ Նախ՝ այդ հնաւանդ սովորութիւններով նրանք ցոյց են տալիս հաւասարութեան և միութեան գեղեցիկ օրինակը նոյն իսկ զատկական ամենամեծ տօնի օրը՝ հացկերոյթի ժամանակ։ Իսկ եղբայրաբարբ միմեանց օգնելու և աջակցելու եղբայրասիրութեան հրաշալի օրինակը նրանք ցոյց են տալիս այն ժամանակ, երբոր իրենց եղբայրակիցները՝ նեղութեան կամ դժբախտութեան մէջ ընկած, ուրիշի օգնութեան ու կարեկցութեան կարօտ են լինում։ Ահա թէ ինչպէս։ Ուտիացոց աշխարհի հարուստ ու աղքատ Հայ ընտանիքները անշուշտ պիտի գնեն իրենց համար մի-մի հատ անարատ ու ընտիր գառը՝ Զատկի օրը ախտ (մատաղ) անելու համար։ Առաւօտեան արշալոյսը դեռ չբացուած, Զատկի օրը, մորթում են բոլոր գառները և փորոտիքները մի լաւ մաքրելուց յետոյ ամբողջապէս խորովում են նրանց և դնում մի մեծ սկուտեղի *) վրայ։ Խոնչայի մէջ, պղնձէ ափսէներով շարում են կարմիր ներկած ձուաներ, նազուք, գաթայ, գեղին խունկի պէս անուշահոտ հացեր, կարագ իւղ, գոմէշի թանձր սեր, քամած մածուն, տապակած հաւեր և հողէ մի մեծ ամանով լիքը կարմիր գինի և այս ամենի վրայից ծածկում են մաքուր սփռոցով և ապա ուղարկում են գիւղական եկեղեցու բակը։ Այստեղ նախապէս ընտրուած մարդիկ են լինում, որոնք իւրա-

*) Տեղացի՝ թէ հայ և թէ Թուրք անուանում են խոնչայ։